Հավելված
Հաստատվել է ՀՀ վերահսկիչ պալատի
խորհրդի 2011թ. մարտի 24-ի
թիվ 11/3 որոշմամբ

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2010 թվականի տարեկան հաշվետվություն

4. Վարկային ծրագրերի մասին

- **«Թամարա Ֆրուտ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող «օրգանիկ» այգիների ստեղծման ծրագիր՝ 0.830 մլն ԱՄՆ դոլար (300,000.0 հազ. դրամ):**

ՀՀ կառավարության 12.02.2009թ. թիվ 180-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Թամարա Ֆրուտ» ՓԲ ընկերության կողմից առաջարկված «օրգանիկ» այգիներ (մշակումը կատարվում է միայն բնական պարարտանյութով՝ գոմաղբ) հիմնելու ծրագրին: «Թամարա Ֆրուտ» ՓԲ ընկերության միջոցով ծրագիրն իրականացնելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը 2009 թվականի ապրիլի 2-ին հատկացվել է 300,000.0 հազար դրամի դրամաշնորհ:

Վերահսկողությամբ արձանագրված խախտումները.

1. «Թամարա Ֆրուտ» ՓԲ ընկերության կողմից առաջարկված «օրգանիկ» այգիների հիմնման ծրագիրը իրատեսական չէ ժամկետի և արժեքի առումով:

2. Ըստ բույսերի աճի և վեգետացիայի ժամկետների վերլուծության առաջին բերքի փաստացի ստացումը հիմնադրված շուրջ 20 հա այգիներից հնարավոր է միայն 2012 թվականին, իսկ հիմնադրված 60 հա-ից հնարավոր է ապահովել միայն 2017 թվականից՝ ծրագրով նախատեսված 2013թ. փոխարեն:

3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների և նյութերի շուկայական գները սխալ որոշելու, դրանց արժեքը ակնհայտ բարձր գներով հաշվարկելու, ոչ իրատեսական ծրագիր կազմելու արդյունքում պետական բյուջեից հատկացվել է 77.5 մլն դրամ ավելի գումար, որը ենթակա է վերականգնման:

4. Տնտեսությունների ընտրության համար հայտարարված մրցույթը և ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են բազմաթիվ խախտումներով և ոչ լիարժեք:

5.Չնայած ծրագրով սահմանվել է մենատնտեսների և գյուղացիական տնտեսությունների համար անհրաժեշտ պահանջներ, մրցույթում հաղթող է ճանաչվել ծրագրի պահանջները չբավարարող 3 մենատնտես:

6. Ծրագրով նախատեսվել է ստեղծել տնկարան՝ 3.0 հա մակերեսով, որից 3000 քմ՝ ջերմոցային տարբերակով: Փաստացի ստեղծվել է շուրջ 4.0 հա տնկարան, որից ջերմոցային տնտեսությամբ՝ 240 քմ:

7. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, հաշվի չառնելով ծրագրով նախատեսված չափաքանակները, պետական բյուջեից հատկացված 300.0 մլն դրամը փոխանցել է «Թամարա Ֆրուտ» ՓԲ ընկերությանն ամբողջությամբ, առանց դրա անհրաժեշտության:

8. Գումարի առկայության պարագայում ծրագրով նախատեսված գործառույթները ամբողջությամբ չեն կատարվել, ծրագրով չօգտագործված 132.0 մլն դրամ գումարը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

9. ՀՀ գյուղատնտեսության և էկոնոմիկայի նախարարությունները չեն իրականացրել իրենց վերապահված վերահսկողական գործառույթները: Չեն լուծել պայմանագիրը և չեն պահանջել վերադարձնել ավելի վճարված գումարները:

10. Ծրագրով նախատեսվել է տնկարանում աճեցնել և ֆերմերներին տրամադրել տնկիներ (մեկ հատի արտադրության համար հատկացվել է 220.0 դրամ), սակայն ֆերմերներին տրամադրվել է ներկրված 74404 տնկի՝ յուրաքանչյուրը՝ 755.0 դրամ: